Տպագրված է 3 օրինակից

Օրինակ ---

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի
01/12/2011թ թիվ 76-Լ որոշմամբ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի նախագահ

---------- Ներսես Երիցյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ կենտրոնական բանկում

«15» դեկտեմբերի 2011թ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

---------- Արթուր Ջավադյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-036

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ

(«ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԼՐԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՏԵԽՆԻԿԱԾՐԱԳՐԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ»)

ԵՐԵՎԱՆ - 2011

ԳԼՈՒԽ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոններով սահմանվում է «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության (այսուհետ՝ Բյուրո) անդամ ապահովագրական ընկերությունների (այսուհետ՝ Ընկերություններ) կողմից ԱՊՊԱ պայմանագրերի էլեկտրոնային եղանակով լրացմանը ներկայացվող տեխնիկածրագրային պահանջները (այսուհետ՝ տեխնիկածրագրային պահանջներ):

2. Տեխնիկածրագրային պահանջները սահմանվում են սույն կանոններով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ընդունված համապատասխան իրավական ակտերով:

3. Տեխնիկածրագրային պահանջների նպատակն է ապահովել Ընկերությունների կողմից ԱՊՊԱ պայմանագրերի էլեկտրոնային կերպով լրացման և կնքման, ինչպես նաև Տեղեկատվական համակարգում տվյալների մուտքագրման գործընթացների արդյունավետությունը՝ հնարավորինս բացառելով այս ոլորտում կեղծիքների իրականացումը:

ԳԼՈՒԽ 2.

ԲՅՈՒՐՈՅԻ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԾՐԱԳՐԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

4. Ընկերության անունից ԱՊՊԱ պայմանագրերի կնքման համար լիազորված անձը (այդ թվում ապահովագրական գործակալը) ԱՊՊԱ վկայագրերի էլեկտրոնային լրացման և առցանց մուտքագրման համար պետք է ունենա առնվազն՝

1) համակարգիչ,

2) տպող սարք,

3) Ընկերության տեղային ցանցին միանալու հնարավորություն (ինտերնետով, լարային միացմամբ կամ որևէ այլ եղանակով),

4) էլեկտրոնային եղանակով ԱՊՊԱ պայմանագրի լրացման համար անհրաժեշտ Ընկերության ներքին ծրագրային ապահովում:

5. Ընկերությունների կողմից ԱՊՊԱ պայմանագրերի էլեկտրոնային լրացման դեպքում ապահովադիրների, ավտոտրանսպորտային միջոցների և լիազորված տիրապետողների վերաբերյալ տվյալների՝ Տեղեկատվական համակարգից ստացման և փոփոխված կամ նոր տվյալների՝ Տեղեկատվական համակարգում մուտքագրման գործընթացը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով: